

Արձանագրություն N 2-փ/17
ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության
փորձագիտական հանձնաժողովի նիստի

03 մայիսի 2017թ

ք.Երևան

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին 7 անդամները և ՀՀ ԷԵԲՊ նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի ներկայացուցիչները:

Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ Յու. Ջավադյանը:

Օրակարգում՝

“Ռոռզման նպատակով 2017 թվականին Սևանա լճից ջրի բացթողման վերաբերյալ” ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի առաջարկության քննարկումը (գեկուցող Յու. Ջավադյանը):

Ջեկուցման ժամանակ նշվեց որ Սևան-Հրազդանյան էներգետիկ- ռոռզման համակարգից 39.097 հազ.հա հողատարածությունների ռոռզման ջրի պահանջարկը ջրանցքների գլխամասային ջրառի կետերում և Աղբյուրակի ջրամբարից մինչև Երևանյան լիճը և Հրազդան գետի հունի լվացման համար ներկայացված պլան- ժամանակահատվածում հաշվարկվել է 531.1 մլն.մ³, ռոռզման միջին նորման ընդունելով 13.6 մ³/հա, Մայր ջրանցքներում ջրի ֆիլտրացիոն միջին կորուստները 20-35% իսկ դերիվացիոն ջրանցքներում 18% գնահատելու պայմաններից ելնելով:

Ռոռզման ջրի պահանջարկը ապահովելու նպատակով ջրաղբյուրներ են ընդունվել Հրազդան գետից 155.4մլն.մ³ Ագատի ջրամբարից 60.6մլն.մ³, Ապարանի ջրամբարից 15.1մլն.մ³ և Սևանա լճից 300.0մլն.մ³ առանց Մխչյանի և ռանչպարի պոմպակայաններից, Արտաշատի Ստորին Հրազդան ջրանցքներին ջրալրում կատարելու:

Հաշվի առնելով որ վերջին տարիներին հիմնականում վերանորոգվել են Արտաշատի, Ստորին Հրազդանի, Արզնի-Շամիրամի մայր ջրանցքները և Հրազդան, Արզնի, Քանաքեռ ՀԷԿ-երի դերիվացիոն ջրանցքներ ու դրանց վրա եղած հիդրոտեխնիկական կառուցվածքները, կառուցվածքները, որը նպաստել է ջրի կորուստների նվազեցմանը: Արզնի-Շամիրամ ջրանցքի 1-ի հերթում կազմում է 12.0%, 2-րդ հերթում 15.0%, Արտաշատի ջրանցքի 15.0%, Ստորին Հրազդան ջրանցքի 1-ի հերթում 10.0%, 2-րդ հերթում 12.0%, իսկ Սևան - Հրազդան էներգետիկ-իրիգացիոն համակարգի Արզել, Արզնի և Քանաքեռ ՀԷԿ-ի դերիվացիոն ջրանցքներում ջրի ֆիլտրացիոն կորուստները ըստ „Հիդրոնախագիծ ինստիտուտ “ ՓԲԸ 2016թ. կատարած ջրաչափության արդյունքում կազմված հաշվետվության գնահատվել են 3.4%, հաշվի առնելով Արզել ՀԷԿ-ի դերիվացիոն ջրանցքը հիմնովին վերականգնված չէ ջրատնտեսական հաշվարկներում կորուստները ընդունվել է 7%:

(ելույթ ունեցան Վ.Նարինյանը, Բ.Գաբրիելյանը, Վ.Սարգսյանը, Ա.Թարվերդյանը ամփոփեց Յու.Ջավադյանը):

Որոշեցին՝

1. Տարածաշրջանի գյուղատնտեսական մշակաբույսերի կազմից, ելնելով և հիմք ընդունելով «Սևան-Հրազդանյան ջրառ» ՓԲԸ կողմից ներկայացված (2017թ Սևան-Հրազդան էներգետիկ ոռոգման համակարգից սնվող ոռոգման ջրանցքների գլխամասային ջրառի պլան ժամանակացույցը) ու էներգետիկ-ոռոգման համակարգից սնվող՝ մայր ջրանցքներում ջրի ֆիլտրացիոն կորուստների նվազեցման նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունքները, ոռոգման միջին նորման առաջարկվում է գնահատել 11.5 հազ.մ³/հա 13.6 հազ.մ³/հա փոխարեն, որի դեպքում ոռոգման ջրի պահանջարկը կկազմի 494.0մլն.մ³:
2. Ոռոգման ջրի 494.0մլն.մ³ պահանջարկը, հաշվի առած 7% դերիվացիոն ջրանցքներում կորուստները, առաջարկվում է ապահովել Ապարանի ջրամբարից 10.0մլն.մ³, Ագատի ջրամբարից 61.0մլն.մ³, Հրազդան գետից ջրառը 155.0մլն.մ³ հաշվի առած Մարմարիկի ջրամբարը և Սևանա լճից 170մլն.մ³: Մնացորդային շուրջ 100մլն.մ³ դեֆիցիտի խնդիրը դիտարկել ջրաղբյուր հանդիսացող ջրամբարների լցվածության վերջնական տվյալները ունենալուց և «Սևավանա լճի մասին» օրենքում նշված ջրի ծավալը ընթացիկ տարվա համար վերահաստատելուց հետո:
3. Առաջարկել ՄԷԿ-ին Սևան-Հրազդան ոռոգման համակարգի Արգելի, Արգնի և Քանաքեռ ՀԷԿ-երի դերիվացիոն ջրանցքների գլխամասերը համալրել ջրաչափիչ հսկիչ սարքավորումներով, մասնավորապես և օրվա կարգավորիչ ջրամբարների մուտքամասերը:
4. Առաջարկել ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեին՝
 - 4.1 Դերիվացիոն ոռոգման համակարգերից սնվող ոռոգման Արտաշատի, Արգնի-Շամիրամի և Կոտայքի մայր ջրանցքներում ֆիլտրացիոն կորուստների մշտադիտարկումների տվյալների տեղեկատվության հավաքագրման, գրանցման և տրամադրման նպատակով տեղադրել ավտոմատ համակարգեր գլխամասերում ջրառի կառավարման խնդիրները լուծելու նպատակով:
 - 4.2 Խմբավորել դերիվացիոն համակարգից ջրառ իրականացնող անհատ /անօրինական/ ջրառի կետերը (սիֆոնները, հատակային ջրթողները, կողային ջրթողները, փոքր պոմպակայանները) 5-10 անհատ ջրօգտագործողներին ջուրը մատակարարել մեկ կետից՝ կոլեկտորից և յուրաքանչյուր ջրօգտագործողի համար կոլեկտորը կահավորել փականով և ջրաչափով, ջրառի ծավալները օրինականացնելու համար:

ՀՀԳԱԱ Սևանա լճի պահպանության

փորձագիտական հանձնաժողովի նախագահ



Յու. Ջավադյան